



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԴՈՒՌԸ




այաստանի Պետական պատմական թանգարանի սեփականությունն են կազմում միջին դարերից մեզ հասած փայտյա քանդակազարդ մեծարժեք մի քանի դռներ: Նրանցից օրնամենտալ (քանդակազարդ) իր հորինվածքով մասնավոր ուշադրության արժանի է Մշո Առաքելոց վանքի երկփեղկանի դուռը, որի կատարողական արվեստի վրա և մենք ցանկանում ենք կանգ առնել մեր ներկա հոդվածում: Բայց նախքան բուն նյութին անցնելը, փոքրիկ տեղեկություն տանք այդ դռան Հայաստանի Պետական պատմական թանգարան հասնելու մասին:

Առաքելոց վանքը գտնվում է Մուշից 8 կիլոմետր հեռավորության վրա: Նա կանգուն է եղել մինչև 1915 եղբրական թվականը: Վանքը կառուցված է Սասունցի Թոռնիկյան իշխանության ժամանակներում:

Նրեում է, որ այդ վանքի ամենից ավելի ակնառու և արժեքավոր հնությունը կազմում էր հենց այդ երկփեղկանի դուռը, որի հետ ծանոթ են եղել գերմանացի հնագետները և 1915 թվին, հայկական տեղահանությունների ժամանակ, հարմար առիթ են գտել, թյուրք կառավարության թուլություններով, գնալ մինչև այդ վանքը, պոկել դուռն ու տեղափոխել Բաղեշ, հարմար առիթով այնտեղից Բեռլինի թանգարանն ուղարկելու դիտումով: Մինչ այդ, ուսական բանակները երբ առաջանում են դեպի հայկական ամայացած նահանգները, հասնում և գրավում են Բաղեշը, թշնամու լքած ավարների շարքում, ձեռք է բերվում նաև այդ պատմական դուռը: Ռուսա-

կան բանակում կուլոդ հայ զինվորները դուռը հանձնում են կուլկաս գաղթող հայ գաղթականներին, որոնք, սրբության պես, որպես անցյալի կուլտուրական արժեքներից փրկված մի նշխարի, գուրգուրանքով իրենց հետ բերում են այդ դուռը և հանձնում Հայաստանի Պետական պատմական թանգարանին, որի լավագույն գանձերից մեկն է հանդիսանում այժմ:

Մշո Առաքելոց վանքի դուռն ունի ավելի քան ութ դարի պատմություն: Ինչպես հայտնի է, Տարոնը և Սասունը արաբական տիրապետության շրջանում, Հայաստանի այլ շրջանների հետ միասին, ենթարկվեցին խոշոր ավերումների: Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում (885—1045 թ. թ.), փոքր ինչ բարելավվում է քաղաքական դրությունը: Տարոնում այդ ժամանակ իշխում էին Մամիկոնյանները, որոնք խնամիական կապեր ունեին Բագրատունյաց արքունական տան հետ: Արևմտյան Հայաստանի որոշ շրջանների հետ, բյուզանդական գերիշխանության տակ է անցնում նաև Տարոնը: Մամիկոնյանները, որպես հայտնի զինվորականներ, մեծ հեղինակություն են ձեռք բերում: Մամիկոնյան այդ իշխաններից Աբուլամիր որդի Թոռնիկը Բյուզանդական կայսրությունից ստանում է «պատրիկ» տիտղոսը և վերադառնալով Սասուն, հիմք է դնում Սասունի Թոռնիկյան իշխանությանը, որը տևում է մինչև 11—13-րդ դարերը, մի ժամանակաշրջան, երբ, հարաբերաբար, խաղաղ զարգացման հնարավորություններն ստեղծվում: Առաքելոց վանքը, ուրեմն, շինարարության և կուլտուրական ծաղկման այդ շրջանին է վերաբերում և հիմնված է



Մշո Առաքելոց վանքի դուռը

12-րդ դարի 2-րդ քառորդի սկզբներին (դրան վրայի արձանագրությունը ԾՁԳ (1134) թվականից է): Մատենագրական մի շարք տվյալներից հայտնի է, որ այդ վանքը եղել է իր ժամանակվա մտավոր կենտրոններից մեկը:

Առաքելոց վանքի դուռը գործ է երեք հայ քանդակագործների: Այդ մասին նշված է դրան վերին արձանագրության մեջ. «Թ. թ. 2. ԾՁԳ ԵՄ ՏՐ ԹՈՐՈՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԳՄ», որը պիտի վերծանել. «Թ թուականի հայոց ԾՁԳ (1134) ես տէր Թորոս և Գրիգոր և Ղուկաս գծեցաք»:

Այն, ինչ հետաքրքրական է այդ դրան քանդակագործության սյուժեում, այդ այն իրողությունն է, որ հեղինակները նպատակ չեն դրել տալ զուտ կրոնական խորհրդանիշներով մի հորինվածք, ինչ որ սովորական է եղել եկեղեցիների և վանքերի դռներին, այլ՝ առավելապես պատմական անցքերը արտահայտող պատկերացումներ:

Քննության առնենք նախ դրան շրջանակը, որը բաղկացած է կողերի երկու և վերևի միացնող մասերից:

Դրան վերևի շրջանակը կազմում է նրա ամենից ավելի նշանակալից և արտահայտուիչ մասը. նա բաղկացած է երկու մասից՝ աջակողմյան քանդակը ներկայացնում է երկու ձիավոր դեմ-դիմաց, որոնցից աջակողմյանը տեղով հարվածում է զգետնված մի հսկա վիշապի: Ձիավորը հավանաբար ներկայացնում է ծանոթ վիշապաստրան սուրբ Գեորգը, իսկ նրա դիմաց կա մի այլ ձիավոր, հավանաբար մի իշխան, քանի որ աջ ձեռքում բռնած ունի մի իշխանական գավազան, իսկ ձախ թևը պաշտպանված է քանդակազարդ մի վահանով: Երկուսի վերևում փորագրված է դժվարընթեռների մի արձանագրություն, որը վարդի է կարգալ ՄԲԳՈՐԳ (սուրբ Գեորգ) կամ ՄԲԹՈՐՈ (սուրբ Թորոս): Ամեն պարագայի, կարելի չէ նեթագրություններից դենն անցնել:

Ձախակողմյան մասում կան երեք անձնավորություններ: Երկարագգեստ մեկը, շեփորը բերնին, որը շեփորում է: Նրա առջևից սրաբշավ ընթանում են երկու ձիավոր, որոնցից առաջինը սուրը ցցած է իր առջևի ձիավորի թիկունքը, որը արքայական տարագով մի անձ է և աջ ձեռքում բառձր բռնած ունի իշխանական գավազան: Բայց նա ավելի փախչողի է նման, քանի որ ձախ ձեռքը կախել է կողմից, մինչդեռ հետևի ձիավորի սուրը դուրս է եկել նրա կրծքից: Ձիավորների վերևում արձանագրված է՝ «Տրդատ»:

Այս տեսարանը ուսումնասիրողներից ոմանք մեկնաբանում են որպես «Մասունցի

Դավիթ» էպոսի մի պատկերացում՝ Դավիթին իր «Սուր կալծակ»ով փախչող Մարտ Մեկեքին հարվածելիս: Բայց այդ դեպքում, ինչպես ս բացատրել «Տրդատ» արձանագրությունը: Արդյոք այդ արձանագրությունը Հայաստանի առաջին քրիստոնյա թագավոր Տրդատ Մեծը չէ՞: Այդ դեպքում ինչու և նա ներկայացված է փախչողի, հալածականի դիրքում: Այա, ի՞նչ առնչություն ունի նա շրջանակի երկու կողերի կենդանական զարդաքանդակների հետ, որոնցից աջակողմյանի վրա պատկերված են բացառապես վայրի գազաններ՝ բուսական օրնամենտալ (քանդակազարդ) ճյուղերի միջից վազքի, հարձակողական շարժումի մեջ, մինչ հանդիպակաց շրջանակում քանդակված են միայն ընտանի անասուններ, վերջացած՝ մարդազրուխ մի սֆինքսով: Հարցել՝ որոնք մնում են շրտաբանված: Քանդակագործ վարպետների նպատակը չի եղել հորինել զուտ կրոնական մի պատկերացում, այլապես նրանք սրբերի, հրեշտակների կամ նահատակների կպատկերենին, քան սպառազեն մարտիկներին: Անհիմն չէ ուրեմն նրանց մեջ տեսնել «Մասունցի Դավիթ» էպոսի այլաբանական մի պատկերացումը: Այդ ընդունելով, դուցի հեշտ կլինի բացատրել դրան երկու կողերի շրջանակների վրա վայրի գազանների և ընտանի կենդանիների քանդակները, որոնց մասին ժողովրդական էպոսում կան հիշատակություններ: Իսկ ինչ վերաբերում է «Տրդատ» և ՄԲԳՈՐԳ» մակագրություններին, դրանք, մեր կարծիքով, հետադաշտում են ավելացվել, քանի որ քանդակող վարպետների հորինման ընդհանուր նախազգի հետ չեն ներդաշնակվում:

Կարևոր է նաև նկատի ունենալ այդ ժամանակաշրջանի քաղաքական անցքերը, սելջուկ-թաթարական ահավոր արշավանքները, որոնց ընթացքում հորինված արվեստագիտական այդ գործում քանդակող վարպետները չէին կարող աննկատ թողնել ժողովրդի մարտական և ինքնապաշտպանության արամագրությունները, արամագրություններ՝ որոնք խորապես կապված էին մեր ազատագրական դարավոր պայքարի հետ:

Հետաքրքրական է նաև դրան օրնամենտալ արվեստը: Վերևի շրջանակի երկու անկյուններում քանդակված են երկու թռչուններ, մեկը՝ մարդագլուխ, մյուսը՝ սիրամարգ: Երկուսն էլ, հավանաբար, սիմվոլիկ (խորհրդանշական) պատկերացումներ են:

Շրջանակի ներքին երկզններից առաջինը ցորենի իրերահաջորդ խուրճեր են՝ մեջտեղից կապված. իսկ երկրորդը՝ տերևազարդ ճյուղի շրջանցիկ մի հյուսք է: Երկու օրնա-

մենտներն էլ բնիկ միջավայրի ստեղծագործություններ են: Գալով դրան երկու փեղկերին, առաջին ակնարկից, դիտողը կարող է կարծել, թե իր առջև ունի արաբական արվեստում այնքան սովորական ութանկյունավոր օրնամենտ՝ «արաբեսք»: Բայց, իրականում, արաբների պատմության թատերաբեմ դուրս գալուց դեռ շատ առաջ Հայաստանում, Վրաստանում և Իրանում նման օրնամենտների արվեստը հասել էր արդեն բարձր կատարելության:

Այդ մասին ուշադրության արժանի է հանգուցյալ Թորամանյանի հայտնած կարծիքը: Քննադատելով Բալդրուշայիդիսի հայտնած «խալ կարծիքը», Թորամանյանը գրում է. «...Գալով Բալդրուշայիդիսի հայկական մանվածոների մեջ «արաբական կամ իսլամական հանճար» տեսնելուն, կարծում եմ, որ այդ եղրակացությունը առաջ է գալիս ժամանակագրական մանրակրկիտ ուսումնասիրություն կատարած չլինելուց: Այս հապճեպ հայտարարությունը մի քանի գիտնական ճարտարապետներ ևս արել են, որ իբր թե այդ ճարտարապետության մեջ տիրող դեր է կատարել արաբական ոճը:

«Արաբները Հայաստանի մեծ մասամբ տեղ դարձած օրից (7-րդ դար) պետք էր, որ իրենց ճաշակը դրոշմած լինեին եթե ոչ 7-րդ դարու, գեթ 10—11-րդ դարու ճարտարապետության վրա: Մինչև 13-րդ դարը այդ կարծեցյալ ճաշակը բնավ գոյություն չունենալին զատ, անոնց տիրապետության շրջանում շենք գտնում մի շենք կանգնված: ...Գոնե իրենց տիրապետած սահմանին մեջ չգտնվեցան հուշարձաններ՝ որոնք այս րնդ-հանրացած կարծիքին հակառակն ապացուցեն:

«Արվեստը հանկարծական թափով երեւան է գալիս Հայաստանի մեջ 13-րդ դարում, թաթարական տիրապետության ժամանակամիջոցին և երկիրը ծածկվում է թեև փոքր՝ բայց հաճոյատեսիլ շինանյութերով: Ահա այս շրջանին է, որ հայկական մանվածոները, որոնք արդեն գոյություն ունեին 5-րդ, 7-րդ և 10—11-րդ դարերում, ստանում են միանգամայն նոր տեսք և նոր գուգախառնում: Այս շրջանին էր, որ տերեւալից ոստերի մեջ խառն կենդանիների և թռչունների քանդակներով մանվածոներ են երևում, որոնք գրեթե օտարանում են հին մանվածոների ակնապարար երևույթին և

մեր կարծիքով մոտենում են անկման, ինչպես որ այդ շրջանումն է, որ սկսում է հայ ճարտարապետության անկումը. որովհետև ոչ միայն մանվածոներն այդ դարում նոր ձև ստացան, այլև՝ շենքերի ամբողջության մեջ ևս հեղաշրջում առաջ եկավ հին ավանդությունները պահելով հանդերձ: Թաթարական շրջանի մանվածոների և քանդակազարդերի այլասերած նմուշներն են Չուլայի բազմաթիվ խաչքարերը, որոնք թեև նախնական հայացքով չափազանց շքեղ և զարդարուն երևույթ ունեն, այնուամենայնիվ նախկին մանվածոների ակնապարար և հաճելի երևույթը չունեն: Այստեղ արդեն նկատելի է ոչ միայն թաթարական ճաշակը, ինչպես Անիի հետին դարերի շինության մեջ, այլև նոր պարսկական ճաշակը, խառնված հին մանվածոների հետ, որոնք ցույց են տալիս նախորդ մեծ արվեստի անկման ենթարկումը»¹:

Նույն իրողությունը կարելի է նաև նշել այդ շրջանի մեր մանրանկարչության մեջ:

Թ. Թորամանյանի հեղինակավոր կարծիքը լուսաբանում է նաև Մշո Առաքելոց վանքի դրան օրնամենտալ արվեստի բնույթը և հարազատությունը մեր ժողովրդի դարավոր ավանդություններին: Այս առթիվ հարկ է նշել, որ մեր մանրանկարչական արվեստի ստեղծագործությունների մեջ ևս հյուսիսային օրնամենտը գտել է կիրառման լայն ասպարեզ և հասել է բարձր զարգացման. այնպես որ, մեր մանրանկարների զարդանկարչական արվեստի բաղդատական ուսումնասիրությունը ճարտարապետական մեր օրնամենտների հետ, նորանոր փաստական տրվյալներ պիտի հայթայթեն հյուսիսային մոտիվների հայկական ինքնուրույն արվեստի մասին: Բայց այդ արդեն մասնագիտական այլ ուսումնասիրության գործ է:

Մենք հավակնություն չունենք այս սեղմ հոդվածում տալ Մշո Առաքելոց վանքի դրան քանդակազարդության սպառիչ ուսումնասիրությունը. մեր նպատակն է միայն փոքր ինչ տեղեկություն տալ անցյալից մեզ հասած հայ արվեստի բարձրարժեք մի նմուշի— Մշո Առաքելոց վանքի դրան քանդակազարդության մասին:

1. Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հատոր Բ, Երևան, 1948 թ., էջ 40:

